



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՌԻԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yarlyan

Ղալամդարյան Անժելա

ԵՊՀ, Սոցիոլոգիայի ֆակուլտետ, մագիստրանտ
Գիտական ղեկավար՝ ս.գ.թ., դոց. Հ. Վերմիշյան
Էլ. փոստ՝ angela.ghalamdaryan@gmail.com

ՋԱՎԱԽԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ «ՄԵՆՔ - ՆՐԱՆՔ» ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԱԲՆԱԿ ՀԱՅԵՐԻ ՀԵՏ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Պատմականորեն սփյուռքի ձևավորման և գործառնման համատեքստում ընդգծվում են հայաստանաբնակ և ոչ հայաստանաբնակ հայի նմանակման և տարբերակման առանձնահատկությունները: Միջխմբային տարբերակման խնդիրն առավել արդիական է դառնում հատկապես ըստ անհրաժեշտության ՀՀ-ում հաճախ գտնվող խմբերի պարագայում, ինչպիսին են, օրինակ, ջավախահայերը: Ջավախահայ երիտասարդները հիմնականում կրթական նպատակով են գալիս ՀՀ, քանի Հայաստանը նրանց համար հայալեզու կրթություն ստանալու հարթակ է: Ջավախահայերի խնդիրներին ուղղված ուսումնասիրություններն ավելի քիչ են, քան նմանատիպ այլ խմբերի, օրինակ՝ սիրիահայերի խնդիրներին ուղղված հետազոտությունները, որտեղ հայաստանաբնակ հայերի հետ հարաբերությունների մասին ևս խոսվում է ֆիզիկական տարածության համատեքստում՝ բաց թողնելով սոցիալական տարածության մեջ առկա միջխմբային տարբերակման առանձնահատկությունները: Այս տեսանկյունից արդիական է դառնում հասկանալ, թե ջավախահայ երիտասարդները ֆիզիկական հեռավորությունը հաղթահարելուց հետո միջխմբային ինչ հարաբերություններ են դրսևորում հայաստանաբնակ հայերի հետ սոցիալական տարածության մեջ: Մյուս կողմից՝ կարևոր է նաև այն, թե ինչ գործոններ են ազդում ջավախահայ երիտասարդների «մենք-նրանք» տարբերակման վրա:

Ջավախահայերը և հայաստանաբնակ հայերը ֆիզիկական տարածության առումով մոտ են, բայց նույն այդ ֆիզիկական տարածության մեջ նրանց խմբային սահմաններն արդեն իսկ առանձնացված են Հայաստանի ու Վրաստանի պետական սահմանով: Պարզելու համար, թե ինչպես են դրսևորվում «մենք-նրանք» տարբերակումների առանձնահատկությունները ֆիզիկական տարածության մեջ հեռավորությունը հաղթահարելուց հետո, անհրաժեշտ է ջավախահայ երիտասարդների խմբային փոխհարաբերությունները հայաստանաբնակ հայերի հետ ուսումնասիրել միաժամանակ ֆիզիկական ու սոցիալական տարածության համատեքստում, որովհետև տարածությունը ֆիզիկական բնութագրիչ լինելուց բացի ունի նաև սոցիալական մեծ նշանակություն՝ հակառակ այն փաստին, որ սոցիալական տարածություն հասկա-

¹ Ջավախքը գտնվում է Վրաստանի Հանրապետության կազմում: Վարչատարածքային առումով Ջավախքն այսօր իր ընդգրկում է Վրաստանի Սամցխե-Ջավախք նահանգը (6 շրջաններ) և Քվեմո Քարթլի նահանգի Ծալկայի շրջանը:

ցությունը սկզբնական շրջանում դիտարկվում էր ֆիզիկական տարածությանը շատ մոտ իմաստով: Այն ընկալվում էր որպես վայր, որտեղ գտնվում են սոցիալական խմբերը և կատարվում են սոցիալապես կարևոր իրադարձությունները: Տարածությունը, համաձայն Ջիմելի, սոցիոլոգիական կարևորություն ունի և անբաժան է «սոցիալական խումբ» հասկացության սահմանունից: «*Սոցիալական տարածությունը մարդկանց փոխգործողությունների վայր է, և չի առանձնանում այն մարդկանցից, ովքեր զբաղեցնում են այդ տարածքը*» [1]: Սորոկինը տարածությունը սահմանում էր որպես երկրի «բնակչություն» [2]: Մյուս կողմից՝ տարածությունը սահմանվում է որպես սոցիալական դիրքերի կարգավորման միջավայր: Այն հիերարխիկ է և ունի գրաֆիկական պատկեր, որում յուրաքանչյուր անհատ կարող է սահմանվել որպես կետ, որը որոշակի հեռավորություն վրա է գտնվում մնացած կետերից: Այդ սխեմայում Չիկագոյի դպրոցի ներկայացուցիչներն էլ են տարածությունը դիտում էմպիրիկ հետազոտությունների համատեքստում [2]:

Ֆիզիկական ու սոցիալական տարածությունների փոխառնչության վերաբերյալ ֆրանսիացի սոցիոլոգ Պ. Բուրդեի մոտեցումը ներկայացնում է սոցիալական տարածությունը որպես սոցիալական դիրքի մատնանշում, իսկ ֆիզիկական տարածությունը՝ օբյեկտի տեղայնացում: Ըստ նրա՝ մարդիկ գործում են միաժամանակ որպես կենսաբանական անհատներ և սոցիալական ագենտներ, անճանաչելի են ֆիզիկական և սոցիալական տարածության հետ որոշակի հարաբերության միջոցով: Եթե անհատի զբաղեցրած տեղը մեկն է՝ ֆիզիկական տարածությունը, ապա սոցիալական տարածությունը որոշվում է դիրքերի փոխբացառման հիմքով [2]: Ստացվում է, որ տարածությունը (ֆիզիկական և սոցիալական) սոցիալական այն միջավայրն է, որտեղ տեղի են ունենում անհատների և խմբերի փոխհարաբերությունները: Հետևաբար, հենց տարածության մեջ է, որ սոցիալական տարբեր փոխհարաբերությունների արդյունքում ընդգծվում են «մենք-նրանք» տարբերակումների առանձնահատկությունները:

Ջավախահայերի միջխմբային հարաբերությունները հայաստանցիների հետ կարելի է դիտել որպես ենթաէթնիկ երկու խմբերի միջև հարաբերություններ: Այդ առումով պետք է բացահայտել «մենք-նրանք» տարբերակումները նրանց ներէթնիկ հարաբերություններում: «Մենք-նրանք»-ի տարբերակման համատեքստում է, որ ձևավորվում են միջխմբային այն սահմանները, որոնք ոչ միայն առանձնացնում են մի խումբը մյուսից, այլև ցույց են տալիս, թե խմբերը սոցիալական տարածության մեջ միմյանց նկատմամբ ինչ դիրքում կարող են գնտվել: Այսինքն՝ «միջխմբային սահմաններ» հասկացության հետ կապվում է «սոցիալական հեռավորություն» հասկացությունը: Սոցիալական հեռավորությունն իր հերթին կապված է կարգավիճակի պահպանման խնդրին. «*սոցիալական հեռավորությունը սոցիալական կարգավիճակի պահպանման արդյունքն է: Նա, ով պահում է սոցիալական հեռավորություն ուրիշներից, միաժամանակ պահում է իր դիրքը ընկերների շրջապատում, օրինակ, իր խմբի ներսում և այլն*» [3]: Մյուս կողմից՝ սոցիալական հեռավորությունը պայմանավորված է սոցիալական տարածության մեջ առկա սպառնալիքներից, որոնք կարող են

հանդիպել միջխմբային հարաբերությունների համատեքստում: Բացի այդ, «միջէթնիկ մակարդակի հարաբերությունները կարող են բխել կարծրատիպերից, որոնք ներկայացված են այն ամենի մեջ, ինչ ասում են և անում են խմբերի անդամները» [3]: Այդ ընկալումներից և սպառանալիքներից, այն է՝ սոցիալական հեռավորությունից կախված, կարող է առաջանալ միջխմբային վստահություն կամ անվստահություն: «Վստահությունը կարելի է համարել մարդկային կյանքի ամենակարևոր բաղադրիչները, որը պայմանավորում է նրանց գործողությունները, և որտեղ էական նշանակություն ունեն այլ մարդիկ» [4]: Ստացվում է, որ միջխմբային վստահությունն ու անվստահությունն են պայմանավորում է մի խմբի անդամների գործողությունները մյուս խմբի անդամների հետ շփվլիս: Այսինքն, դրա արդյունքում անհատն է ընտրում է իր գործողության ռազմավարությունն ու որոշում, թե տարածաժամանակային կոնկրետ միջավայրում ինչպես պետք է վարվել:

Այսինքն՝ հրատապ է ՀՀ-ում ուսանող ջավախահայ երիտասարդների նմանակման և տարբերակման առանձնահատկությունների բացահայտումը: Այդ նպատակով խորին հարցազրույցներ են իրականացվել ՀՀ-ում սովորող 16 ջավախահայ երիտասարդների հետ, որոնց ընտրության ջափանիշ են եղել՝ սեռը, կրթությունը (դպրոց, միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններ), ՀՀ-ում ընդունող կողմ ունենալու կամ ջունենալը հանգամանքը: Խորին հարցազրույցներն իրականացվել են նախապես մշակված ուղեցույցի համաձայն, որում հիմնական ջեշտը դրվել է հետազոտության մասնակիցների սպասումների, արդարացված և ջարդարացված ակնկալիքների բացահայտման վրա: Հաշվի են առնվել նաև հայաստանցիների հետ ջփման գործընթացում խմբային փորձի ազեցությունն ու ՀՀ-ում հարմարվողականության (ադապտացիա) և ինտեգրացման գործընթացների վրա ազդող գործոնների բացահայտման կարևորությունը: Կիրառվել է նաև պրոյեկտիվ տեխնիկա. հարցազրույցի մասնակիցներին հանձնարարվել է նկարել հայի և ջավախեցու մեկական կերպար: Այդ նկարների հիման վրա կատարվել է բովանդակային (կոնտենտ) վերլուծության: Հարցազրույցներն անցկացվել են 2017-2018 ուսումնական տարում ՀՀ-ում սովորող ջավախահայ երիտասարդների հետ:

Այս նպատակով իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն, որի արդյունքների ընդհանրացումը թույլ է տալիս պնդելու, որ հայաստանցիները «լրիվ ուրիշ են, տարբեր են ու հայաստանցիների նման ջեն»: Այն փաստը, որ նման ջմբերի անդամները (տվյալ դեպքում՝ ենթաէթնիկ ջմբի) առավել ջատ են հակված դրական պատկերացումներ ունենալու սեփական ջմբի անդամների և բացասական պատկերացումներ՝ «ուրիշ» ջմբի անդամների մասին, դրսևորվում է հենց այստեղ: Ընկալումներում նրանց ջմբի դրսևորած այդ կարծրատիպերը հետևյալ կերպ են հանդես գալիս՝

• **Ավտոկարծրատիպեր՝** «հասնող», «օգնող», «հավատարիմ», «բարի», «վստահելի», «ազնիվ», «խելացի», «ուժեղ»:

• **Հետերոկարծրատիպեր՝** «խաբերա», «կեղտոտ», «անվստահելի», «նախանձ», «անհյուրընկալ»:

Հարցվողներն, օրինակ նշում էին, թե՛

«...Հայաստանցիները խաբերա են, խաբերա, մեկը մեկի գլխին սարքելով ման են գալիս, զգուշ պիտի լինես սրտեղ, հանկարծ քո գլխին էլ չսարքեն...» (ավագ դպրոցում սովորող 17 տ. տղա):

«...Ջավախքցիները վատ կողմ չունեն, իրանց ամենալավն էնա, որ իրար մեջքի կանգանձ են...: Կուզեի, որ հայաստանցիներն էլ մեր պես ըլլեին: Հատկապես աղջիկները մեզի պես համեստ ըլլեին» (քոլեջում սովորող 16 տ. աղջիկ):

Նշված հետերոկարծրատիպերը զգուշավորություն են առաջացնում, որովհետև մարդիկ ձգտում են շփվել այնպիսի մարդկանց հետ և փնտրում են նրանց, ովքեր կօգնեն իրենց անորոշ իրավիճակներում և ովքեր, ըստ իրենց, բարի են, օգնող, ազնիվ, հավատարիմ [4]: Իսկ հայաստանցիները նրանց ընկալումներում հեռու են նշված բնութագրիչներից: Հետևաբար, նաև վստահության պակաս կա, ինչն էլ իր հերթին հանգեցնում է սոցիալական հեռավորության մեծացման:

Հարկ է նշել, որ կարծրատիպի իրական կրողը խումբն է, և հայաստանցիների մասին ընկալումները ջավախահայ երիտասարդների մոտ մեծապես պայմանավորված են իրենց խմբի դրսևորած կարծրատիպային պատկերացումներով, որը նրանց մոտ ձևավորվում է դեռևս մինչև ՀՀ գալը: Հարցվողներից շատերը նշում էին, որ իրենց մինչև ՀՀ գալը ասել են, թե հայաստանցիները խաբերա են, անվստահելի, որ պետք է զգուշ լինել:

«...Հայաստանցուն վստահել չի կարելի, մենք չենք վստահե հայաստանցիներին, հայաստանցու մասին միշտ էտ կշեշտվի, որ խաբերա ազգ են: Հաստատ հայաստանցին մեջքեղ զայնե գը: Միշտ մեր քով կըսեն զգուշ էղիք հայաստանիներուն հետ, անուշ խոսքերին չխաբվիք, քփություն չենեք: Նախապատրաստված քուկանք ընդեղից: Եսա շատ չեմ ուզե շփվիմ, որտև մե բանմ կա, որ էտքան կըսեն մերոնք»:

Նման դեպքում ջավախահայ երիտասարդների զգուշավորությունն իսկապես «արդարացված» է: Երևում է, որ նրանց մոտ արմատավորված այդ պատկերացումներն են, որ «մշակութային գիտելիք»-ի մաս են դարձել, և պայամանավորում են ներէթնիկ հարաբերություններ: Մյուս կողմից՝ «մենք-նրանք» տարբերակման համատեքստում կարևոր է կարգավիճակի պահմանումը, հատկապես, երբ դրա համար պայքարել են անցյալում [5]: Հարցվողներից շատերը նշում էին, որ Վրաստանում, ապրելով այլ ազգերի հետ, իբրև հայ պահել են իրենց լեզուն ու կրոնը՝ մնալով նույն ջավախեցին: Վերջիններիս կարծիքով՝ ՀՀ-ում ևս պիտի պահեն իրենց դիրքը, լավ հատկանիշները, կամ այլ կերպ ասած՝ կարգավիճակը: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ նրանք, սոցիալական հեռավորություն պահելով հայաստանցիներից, միաժամանակ ջավախեցիների խմբում ցանկանում են պահել նաև իրենց դիրքը: Դա ապացուցվում է այն փաստով, որ նա, ով ուրիշներից սոցիալական հեռավորություն է պահում, միաժամանակ փորձում է պահել նաև իր դիրքը խմբի ներսում [4]:

«...Ես շատ հպարտ եմ, որ ջավախքեցի եմ, ջավախեցիներն էման անուն են թողել, որ հեջ մեկմ չի կոնա վատ վերաբերվի: Ես չէի ուզի հայաստանցի լինելի օրինակ, էսման ինձի ավելի հպարտ կզգամ, մեր պատմությունը շատ կհպարտացնե, որ մենք ուրիշ պեպության մեջ տակ հայ ենք մնացել» (ավագ դպրոցում սովորող 17 տ. աղջիկ):

«...Դե ես հիմա ինչիս հայաստանցոնց հետ ընկերություն անեմ, մենք չունինք իրենց հետ, ես որ Հայաստան էի գալի, ինձի կըսեին հանկարծ մոտիկություն չենես շատ մունդառ են, մե կողմեն եսա կմտածեմ, որ մունդառ են, բայց մեկալ կողմեն իմ ընկերները մեր քովի, որ իմանան ես շատ մոտիկ եմ հայաստանցոնց հետ կարողա ինձի հետա էլ չունենան...» (բուհ-ում սովորող 22 տ. տղա):

Մյուս հետաքրքիր եզրահանգումն այն է, որ ջավախահայ երիտասարդների «մենք-նրանք» տարբերակման մեջ որպես տարբերակիչ գործոն հանդես է գալիս նաև լեզուն՝ սկզբնական շրջանում հայաստանցիների հետ հաղորդակցվու և շփվելու ընթացքում դառնալով խոչընդոտ: Հարցվողներից մի աղջիկ նշեց.

«...Ես շատ կքաշվեի, ինձի կթվար իրենք սաղ ինձի ձեռք կառնեն, բան չէի հասկնա ինչ կըսեին սուս կմնայի, բայց որ հիմի ըլլիր լավ ինչ պեպք է կըսեի հայաստանցի աղջիկնուն...» (բուհ-ում սովորող 21 տ. աղջիկ):

Կարևոր տարբերակիչ նաև ՀՀ-ի կրթական մեխանիզմը: Ջավախահայ երիտասարդները կարծում են, թե իրենք ավելի լավն են, ավելի խելացի, հետևաբար՝ ունեն որոշ առավելություններ: Բացի այդ, ըստ նրանց՝ դա պայմանավորում է հայաստանցիների համեմատաբար վատ վերաբերմունքը՝ առաջացնելով նախանձի զգացողություն: Հարցվողներից մի աղջիկ նշեց.

«...Օրինակ դասարանցիներս ներվայնան գը, որտև ստեղ ջավախքեցիները առանց պարապելու կոնան ընդունվին, իրենք էտքան պարապին մենք էսման ընդունվինք: Ես իձնի լավ կզգամ, մե բանմ կա, որ մեզի առաջ կտանին: Լավ է, որ մեզի կառանձնացնեն»:

«Մենք-նրանք» տարբերակման առանցքային կողմերից են մշակութային հակադրությունները: Խոսքն առաջին հերթին ժամանակակից ու ավանդական տարրերի հակադրության մասին է: Հետաքրքիր է, որ թե՛ աղջիկների, թե՛ տղաների պատկերացումներն այս հարցի շուրջ համընկնում են: Նրանք հայաստացի տղաներին համարում են ընտանիքից հեռու, կնոջ խոսքով առաջ շարժվող, իսկ աղջիկներին՝ ազատամիտ: Հարցվողներից մի տղա նշեց.

«...Էստեղաց աղջիկները՝ աման, մեր քովի աղջիկնուն տանին ծովը ծարավ հետ կբերեն, շատ երես առած են էստեղաց աղջիկնեն, իրենց հագածով, ամեն ինչով...»:

Իսկ հարցվողներից մի աղջիկ էլ նշեց, որ ջավախեցի տղաների համար կինը, ընտանիքն ավելի ամուր հիմք ունեն.

«...Ջավախքեցիքի համար ընտանիքը առաջին տեղում ա միշտ էլ, դրա համար քիչ են բաժանվում, ջավախքեցի տղաները ընտանիքի գլխին կանգնած են...»:

Թերևս նման հակադրության արդյունքում է, որ օրինակ ջավախահայ երիտասարդները չեն ցանկանում հայաստանաբնակ հայի հետ ամուսնանալ: Այն հարցին, թե կամուսնանաք արդյոք հայաստանցու հետ, մի աղջիկ պատասխանեց.

«...Չէ, չէ, ծնողներս էլ չէին ուզի: Շատրա լիոնում, որ ջավախքեցուն Հայաստանիցա ուզում, բայց մենք չենք ուզում: Զզվելի են հայաստանցիները...»:

Հայաստանցուն «մեզնից լիովին տարբեր» ընկալելու հանգամանքը երևաց նաև նկարներում: Հայաստանցիներին աղջկա կերպարով էին նկարում, արդի տարրերի համադրությամբ, մինչդեռ ջավախքեցու կերպարը կա՛մ տղամարդ էր՝ առանց վառ արտահայտված որևէ տարրի, կամ էլ աղջիկ կամ կին՝ բավականին համեստ կերպարով, ավանդական տարրերի առկայությամբ, հաճախ՝ տարազանման հագուստով (Նկար 1):



Նկար 1. Հայաստանցու և ջավախքեցու կերպարային ընկալումները

Միակ ընդհանրությունը, ըստ նրանց, հայի ինքնությունն էր: Սակայն ինչպես ցույց տվեցին նկարները, այդ ընդհանրությունը նրանց ընկալումներում բացարձակ չէ, քանի որ յուրաքանչյուր կերպարի մոտ գրում էին, թե հայաստանցին որ մեկն է, ջավախքեցին՝ որը: Հետաքրքիրն է, որ 16 նկարներից 9-ում հայաստանցու նկարի վերևում գրել էին հայ, ոչ թե հայաստանցի (Նկար 1):


Ակնհայտ է, որ ջավախահայ երիտասարդները իրենց տարբերակում են ոչ միայն հայաստանցուց, այլև հայից: Մյուս կողմից՝ նրանք «ջավախքեցի» բառը բավականին արտահայտված էին գրում՝ մեծատառերով: Այսինքն, իրենց ավելի շատ կապում են Զավախքի, քան Հայաստանի հետ: Այդ է պատճառը, որ նրանց հարաբերությունները

հայաստանաբնակ հայերի հետ զարգանում են սոցիալական որոշակի հեռավորության համատեքստում:

Ջավախեցիներն իրենց խմբի ներկայությունը ՀՀ-ում հանգստություն ու ապահովություն են համարում: Նրանց «ջավախեցու» ինքնությունը, որը մարմնավորում է անցյալի շարունակությունը, այս տեսանկյունից անհատի համար հուսադրող հոգեբանական գործառույթ է կատարում այդպիսի իրավիճակներում [3]:՝ Օրինակ հարցվողներից մի աղջիկ նշեց .

«Ես ինձի լավ կզգամ, որ ջավախքեցի եմ, ոչ թե հայ, էսման ավելի լավ է, մեկ է էստեղ շար են մերոնք, իմ մեջքիս կանգնած են...»:

Այսպիսով՝ ջավախայ երիտասարդների «մենք-նրանք» տարբերակումների առանձնահատկությունները պայմանավորված են մշակութային տարբերություններով և խմբային փորձի արդյունքում ձևավորված ավոտ-հետերոկարծրատիպերով, ինչը դրսևորվում է շղթայական հետևյալ գործընթացի միջոցով՝



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] **Чернявская О. С.**, Теории социального пространства, Нижегородский Государственный Университет им. Н. И. Лобачевского, 2011 .

[2] **Վերմիշյան Հ. Ռ., Բալասանյան Ս. Ս., Գրիգորյան Օ. Գ., Քերոբյան Ս. Ն.**, Լոկալ ինքնությունները Երևանում, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 32:

[3] **Eriksen T. H.**, Ethnicity and Nationalism Anthropological Perspectives, published by Pluto Press, 2010, p. 45, 29, 81 .

[4] **Штомпка П.**, Доверия осножа общества, Москва, Логос, 2012, с. 68, 81, 45

[5] **Bogardus E. M.**, ‘Social Distance in the City’, Proceeding and Publications of the American Sociological Society, 1926, p. 46.

Ղալամդարյան Անժելա

**ԶԱՎԱԽԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ «ՄԵՆՔ - ՆՐԱՆՔ» ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԱԲՆԱԿ ՀԱՅԵՐԻ ՀԵՏ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Բանալի բառեր՝ սոցիալական տարածություն, սոցիալական հեռավորություն, սոցիալական վստահություն, սոցիալական կարգավիճակ, ավտոկարծրատիպ, հետերոկարծրատիպ:

Հոդվածի հիմքում ընկած են հայաստանաբնակ հայերի հետ հարաբերություններում ՀՀ-ում ուսանող ջավախահայ երիտասարդների նմանական և տարբերական առանձնահատկությունների բացահայտմանն ուղղված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները: Հետազոտության համար ստեղծվել է տեսական սխեմա՝ բացահայտելով «միջխմբային հարաբերություններ», «սոցիալական հեռավորություն», «սոցիալական վստահություն» հասկացությունների հայեցակարգային կապը: Հետազոտությունն իրականացվել է տեղեկատվության հավաքագրման խորին հարցազրույցի և կոնտենտ վերլուծության մեթոդներով: Հետազոտության արդյունքում պարզվեց, որ ՀՀ-ում ուսանող ջավախահայ երիտասարդների «մենք-նրանք» տարբերակումների առանձնահատկությունները պայմանավորված են մշակութային տարբերություններով և խմբային փորձի արդյունքում ձևավորված ավտո կամ հետերոկարծրատիպերով:

Галамдарян Анжела

**ОСОБЕННОСТИ ДИФФЕРЕНЦИАЦИИ «МЫ И ОНИ» В ОТНОШЕНИЯХ
АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ ИЗ ДЖАВАХКА И АРМЯН, ПРОЖИВАЮЩИХ В
АРМЕНИИ**

Ключевые слова: социальное пространство, социальная дистанция, социальное доверие, социальный статус, автостереотип, гетеростереотип.

Исследование основано на выявлении особенностей дифференциации между «Мы и Они» в отношениях армянской молодежи из Джавахка, обучающейся в Армении, и армян, проживающих в Армении. Для исследования была создана теоретическая основа, раскрывающая концептуальные связи между следующими понятиями: межгрупповые отношения, социальная дистанция, социальное доверие. Исследование проводилось с использованием двух методов сбора информации: глубинное интервью и контент-анализ. Основным результатом исследования является то, что особенности дифференциации между «Мы и Они» армянской молодежи из Джавахка обусловлены культурными различиями и авто- или гетеростереотипами, которые формируются через групповой опыт.

PECULIARITIES OF ‘US-THEM’ DIFFERENTIATION AMONG ARMENIAN YOUTH AND YOUNG PEOPLE FROM JAVAKHK REGION STUDYING IN ARMENIA

Key words: social space, social distance, social trust, social status, autostereotype, heterostereotype.

The article focuses on the results of the sociological research aimed at studying the peculiarities of ‘us-them’ identification/differentiation among Armenian youth and young people from Javakhk region studying in Armenia. A theoretical scope has been developed for the study, revealing the conceptual connection between inter-group relations, social distance, and social trust. Data collection has been conducted through in-depth interviews and content analysis. We have come to the conclusion that the peculiarities of ‘us-them’ differentiation among Armenians from Javakhk are determined by cultural differences and/or auto/heterostereotypes formed through group experience.